ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ
ՀՐԱՄԱՆ

«18» հունվար 2019թ. No 122 - Ա

«ՄԻԼԴՐՈՆԱՏ, ՄԵԼԴՈՆԻՈՒՄ (ՄԵԼԴՈՆԻՈՒՄԻ ԴԻՀԻԴՐԱՏ), ԼՈՒԾՈՒՅԹ ՆԵՐԱՐԿՄԱՆ, 100ՄԳ/ՄԼ, 5ՄԼ ԱՄՊՈՒԼՆԵՐ N10» 32810418 ՍԵՐԻԱՅԻ (ՊԻՏԱՆԻՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏ՝ 04.2023Թ.) ԴԵՂԻ ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅՈՒՆԸ ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ ԵՎ ՀԵՏՀԱՎԱՔԸ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ

0457
21 JAN 2019 ժամ 10.28

Հիմք ընդունելով Վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի «Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության կանոնադրությունը հաստատելու մասին» N 728-Լ որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության կանոնադրության 18-րդ կետի «20» ենթակետը, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի 2012 թվականի փետրվարի 24-ի N303-Ա հրամանով հաստատված՝ «Հայաստանի Հանրապետությունում դեղերի, դեղանյութերի, բժշկական նշանակության այլ արտադրանքի և կենսակտիվ սննդային հավելումների շրջանառությունը դադարեցնելու և շրջանառությունից հանելու (հետկանչի) կարգը, հետկանչի մասին ահազանգի ծանուցման և հետ կանչի իրականացման վերաբերյալ տեղեկատվության ձևերը հաստատելու մասին» կարգի 3-րդ կետը, ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի 11.01.2019 թվականի թիվ 01/59-19 գրությունը, «Ակադեմիկոս Էմիլ Գաբրիելյանի անվան Դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» ՓԲԸ-ի 2018 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 0114175518 եզրակացությունը, համաձայն որի «Միլդրոնատ, մելդոնիում (մելդոնիումի դիհիդրատ), լուծույթ ներարկման, 100մգ/մլ, 5մլ ամպուլներ N10» 32810418 սերիայի (պիտանիության ժամկետ՝ 04.2023թ.) դեղի ներմուծման վերաբերյալ տվյալները բացակայում են փորձագիտական կենտրոնի տվյալների բազայից: Դեղը գրանցված չէ ՀՀ-ում պիտանիության ժամկետի, ներմուծման ուղու, հակացուցումների և արտադրողի վերաբերյալ տեղեկատվության անհամապատասխանության հիմքերով՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Դեղերի մեծածախ իրացմամբ զբաղվող, դեղատնային գործունեություն իրականացող, բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող

21.01.19 09³⁰

իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերին՝ դադարեցնել «Միլդրոնատ, մելդոնիում (մելդոնիումի դիհիդրատ), լուծույթ ներարկման, 100մգ/մլ, 5մլ ամպուլներ N10» 32810418 սերիայի (պիտանիության ժամկետ՝ 04.2023թ.) դեղի շրջանառությունը Հայաստանի Հանրապետությունում:

2.Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության աշխատակազմի հասարակայնության հետ կապերի բաժնի պետ Լ. Բաբախանյանին՝

1) ապահովել մասնագիտական և պաշտոնական զանգվածային լրատվության միջոցներում համապատասխան տեղեկատվության հրապարակումը:

3. «Ֆորտունա» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության Հայաստանյան մասնաճյուղի տնօրենին՝

1) Ապահովել սույն հրամանի առաջին կետում նշված «Միլդրոնատ, մելդոնիում (մելդոնիումի դիհիդրատ), լուծույթ ներարկման, 100մգ/մլ, 5մլ ամպուլներ N10» 32810418 սերիայի (պիտանիության ժամկետ՝ 04.2023թ.) դեղի շրջանառության դադարեցումը Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքում և հետ հավաքումը՝ այդ մասին տեղեկատվություն տրամադրելով Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարությանը:

4. «Ակադեմիկոս Էմիլ Գաբրիելյանի անվան դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» ՓԲԸ-ի տնօրենի ժ/պ Լ.Մելիքյանին՝

1) սահմանված կարգով ապահովել հետհավաքման գործընթացի համակարգումը և արդյունքների մասին տեղեկացնել ՀՀ առողջապահության նախարարություն:

5. ՀՀ առողջապահության նախարարության աշխատակազմի քարտուղարության պետ Զ. Դարբինյանին՝ սահմանված կարգով ապահովել սույն հրամանի օրինակի հանձնումը սույն վարչական ակտի հասցեատերերին:

ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ ԱՐՍԵՆ ԹՈՐՈՍՅԱՆ

18.01.2019

X

VERIFIED OCSP 18.01.2019 15:21:27 GMT+4

Signed by: TOROSYAN ARSEN 3114820360